ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՄԻՐԱՂՅԱՆ ՄԱՐԻԱՆՆԱ ԳԻԳՈԼԻ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԽՈՍՔԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔ

ԺԳ 00.01 – «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2019

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մանկ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր
Ս. Ա. Մարության

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Ջ. Հ. Գյուլամիրյան

մանկ. գիտ, թեկնածու, դոցենտ
Լ. Հ. Հակոբյան

Առաջատար կազմակերպություն՝ **Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019թ. դեկտեմբերի 18-ին, ժամը 12^{00} Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Ատենախոսության սեղմագիրն առաքված է 2019 թ.-ի նոյեմբերի 8-ին:

«Մանկավարժություն» 020 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար, մանկավարժական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Թ. Յու. Ազատյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Կրթական բարեփոխումների արդի փուլում վերանայվում են կրթության բովանդակությունը, չափորոշիչները, կրթական ծրագրերը, ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման ձևերը, մեթոդները՝ առավել արդիական և հասարակության պահանջներին համահունչ դարձնելու համար:

Առավել արդիական է կրթական ծրագրերի վերանայման խնդիրը, քանի որ հասարակության զարգացման ներկա փուլում կարևորվում են ուսումնառողի իմացական կարողությունների զարգացումը, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերումը, ինքնազարգացումն ու ինքնաիրացումը: Այս համատեքստում բացառություն չեն նաև նախադպրոցական կրթական ծրագրերը, որոնց լրամշակումը միտված է երեխայի ինքնարտահայտման, ինքնաիրացման, ինքնակազմակերպման խթանմանը:

Նախադպրոցական կրթական ծրագրերի մշակման գործընթացը քննարկված է մի շարք մանկավարժների հետազոտություններում (Ն. Վ. Դեգտևա (2012),, Ն. Վ. Միկլաևա (2010), Օ. Ս. Ուշակովա, Ե. Մ. Ստրունինա (2010), Տ. Ն. Դորոնովա (2010), Վ. Ի. Լոգինովա (2010), Տ. Ի. Մոլչանովա, Ն. Կ. Վինոգրադովա (2001), Ս. Վ. Կուզմին (2005), Է. Վուդ, Հ. Հեդգես (2012), Լ. Ս. Մանուկյան, Հ. Միտոյան, Ա. Ա. Հովհաննիսյան (2007), Ս. Ա. Մարության (2008), սակայն խնդրն այժմեական է նաև այսօր՝ ելնելով մանկության արդի հիմնախնդիրներով պայմանավորված ծրագրային մոտեցումների և ժամանակի պահանջների համադրման անհրաժեշտությունից:

Նախադպրոցական կրթական ծրագրերում առկա են որոշակի հակասություններ, որոնք դրսևորվում են ծրագրային պահանջների և նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման ներքին հնարավորությունների ոչ լիարժեք համապատասխանությամբ:

Նախադպրոցական կրթական ծրագրի մշակման հիմք հանդիսացող խոսքի լեզվաբանական վերլուծությամբ բացահայտվում են լեզվի յուրացման առանձնահատկությունները՝ հնչյունային, բառային, քերականական կողմերով, որոնք էլ թույլ են տալիս առանձնացնել երեխայի խոսքի վերահսկման, նրա ներուժի դրսևորման, ստեղծագործական ակտիվության, ինքնարտահայտման և ծրագրային պահանջների միջև առկա հակադրությունները: Նշված ծրագրերն ունենալով առարկայական բնույթ և միավորված չլինելով մեկ ընդհանուր առանցքի շուրջ՝ լուրջ դժվարություններ են առաջացնում երեխաների հետ կազմակերպվող աշխատանքներում: Ընդհանուր հիմնախնդրի շուրջ մենք դիտարկում ենք նախադպրոցականների լեզվական կարողությունները, որոնց զարգացածության մակարդակով է պայմանավորված նրանց հետ իրականացվող աշխատանքների արդյունավետությունը, ծրագրի բովանդակության դյուրին յուրացումը: Խոսքի լեզվաբանական վերլուծությունն ապահովում է հասկանալու երեխայի խոսքի

վերահսկումը, ինքնակազմակերպումը՝ լեզվական համապատասխան միավորների ընտրությամբ սեփական մտքերի կազմավորումը և ազատ արտահայտումը: Նշված հիմնախնդիրը, սակայն, չի դիտարկվում որպես ուսումնադաստիարակչական գործընթացի առաջնահերթություն և դուրս է մնում կրթական ծրագրերի մշակման գործընթացից՝ խաթարելով նախադպրոցականի լեզվական կարողությունների պատշաճ ձևավորումն:

Ատենախոսության թեմայի ընտրությունը պայմանավորված է նրա արդիականությամբ, որը նպաստել է հետազոտության նպատակի հստակեցմանը:

Հետազոտության նպատակն է խոսքի լեզվաբանական վերլուծությամբ բացահայտել լեզվի յուրացման առանձնահատկությունները և մշակել նախադպրոցականի խոսքի ինքնակազմակերպմանն ու ազատ արտահայտմանը նպաստող կրթական ծրագրի հիմք հանդիսացող մանկավարժական մոտեցումներ:

Հետազոտության օբյեկտը նախադպրոցականի լեզվական կարողությունների ձևավորման գործընթացն է՝ նախադպրոցական կրթական ծրագրի համատեքստում:

Հետազոտության առարկան կրթական ծրագրերի մշակման հիմք հանդիսացող նախադպրոցականի խոսքի լեզվաբանական վերլուծությունն է:

Հետազոտության գիտական վարկածը: Ենթադրվում է, որ նախադպրոցականի խոսքի լեզվաբանական վերլուծությունը կարող է դառնալ կրթական ծրագրի հիմք, եթե՝

- նախադպրոցականի խոսքի շարունակական զարգացումը հենվի նրա լեզվական կարողությունները սահմանող չափորոշիչների վրա՝ ապահովելով ազատ ինքնարտահայտման ու ինքնակազմակերպման պայմաններ,
- խոսքի ազատ արտահայտմամբ և պլանավորմամբ ձևավորվեն նախադպրոցականի լեզվական կարողությունները,
- փորձարարությամբ հիմնավորվեն նախադպրոցականի լեզվական կարողությունների ձևավորմանը միտված մանկավարժական և մեթոդական մոտեցումները:

Հետազոտության նպատակով ու վարկածով պայմանավորված մենք մեր առջև դրել ենք հետևյալ **խնդիրները.**

1. ուսումնասիրել նախադպրոցական կրթական չափորոշիչների, ծրագրերի, կրթության բովանդակության տեսական և գործնական հիմքերը,
2. դիտարկել նախադպրոցականի խոսքի զարգացմանը ներկայացվող ծրագրային պահանջները,
3. վերլուծել երեխայի խոսքի լեզվաբանական կողմը միջգիտական կապերի տեսանկյունից,

4. բացահայտել լեզվական միավորները յուրացնելու և խոսքում դրանք կիրառելու նախադպրոցականի հնարավորությունները,

5. մշակել, փորձարկել և ներդնել նախադպրոցականի լեզվական կարողությունների ձևավորման մանկավարժական և մեթոդական մոտեցումները, միջոցները, ձևերը,

6. փորձարարական հետազոտությամբ բացահայտել ավագ նախադպրոցականի լեզվական կարողությունների ձևավորմանը միտված մեր կողմից առաջադրվող մանկավարժական մոտեցումների արդյունավետությունը:

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել կրթական ծրագրերի մշակման վերաբերյալ տեսական մոտեցումները (Ն. Վ. Դեգտևա, Ն. Վ. Միկլաևա, Տ. Ի. Մոլչանովա, Օ. Ս. Ուշակովա, Ե. Մ. Ստրունինա), կրթության բովանդակության հայեցակարգային դրույթները (Լ. Ս. Վիգոտսկի, Ա. Ն. Լեոնտև, Ա. Վ. Զապորոժեց, Մ. Ի. Լիսինա, Տ. Վ. Վորոնցովա, Օ. Ա. Կոտովա, Ի. Յա. Լերներ, Վ. Վ. Կրաևսկի, Ջոն Դյուի, Կ. Ա. Ղահրամանյան), նախադպրոցական կրթական չափորոշիչների վերաբերյալ վերլուծությունները (Տ. Ա. Բուդժե, Օ. Ս. Դակուկինա, Տ. Ա. Նիկիտինա, Ա. Գ. Կասպրժակ, Օ. Բ. Լոգինով) երեխայի խոսքի յուրացման ու զարգացման վերաբերյալ առանձնահատկությունները (Ե. Ի. Տիխեևա, Օ. Ս. Ուշակովա, Ե. Մ. Ստրունինա, Ֆ. Ա. Սոխին, Դ Բ. Էլկոնին), լեզվաբանական մոտեցումը երեխայի կողմից լեզվի յուրացման վերաբերյալ (Ն. Ա. Հոմսկի, Դ. Ա. Սլոբին, Ե. Խ. Մամեդովա), հոգեբանության մոտեցումները խոսքային գործունեության և հաղորդակցման ընթացքում լեզվական համակարգի կիրառման վերաբերյալ (Ժ. Վ. Պիաժե, Լ. Ս. Վիգոտսկի, Ա. Ն. Լեոնտև, Դ. Բ. Էլկոնին), խոսքի մեխանիզմների վերաբերյալ դրույթները (Ջ. Մ. Դաքս, Պ. Պ. Բրոկա, Կ. Ի. Վերնիկե, Ն. Ի. Ժինկին), հայ իրականության մեջ՝ Խ. Աբովյանը, Ղ. Աղայանը, Ա. Բահաթրյանը, Է. Ա. Ալեքսանդրյանը, Ջ. Հ. Գյուլամիրյանը, Ս. Ա. Մարությանը, ովքեր կարևորել են երեխայի խոսքի զարգացման գործընթացի արդյունավետ կազմակերպումն ու իրականացումը:

Հետազոտության նպատակի, գիտական վարկածի հաստատման և հետազոտության խնդիրների ուսումնասիրության ընթացքում կիրառվել են հետևյալ **մեթոդները.**

1. տեսական մեթոդներ՝ թեզի հիմնախնդրի վերաբերյալ մանկավարժահոգեբանական, լեզվաբանական գիտամեթոդական գրականության վերլուծություն և սկզբունքների դասակարգում,

2. էմպիրիկ մեթոդներ՝ դիտում, զրույց, հայտորոշիչ մեթոդիկաներ, փորձարարական հետազոտություն՝ արձանագրող, ձևավորող և ստուգիչ փուլերով,

3. մաթեմատիկական-վիճակագրական վերլուծություն:

Հետազոտության գիտական նորույթը:

- խոսքի լեզվաբանական վերլուծությամբ բացահայտվել է, որ նախադպրոցականի լեզվական կարողությունները, նրա խոսքի ինքնակազմակերպման, ազատ արտահայտման արդյունք են,
- նախադպրոցականի խոսքի լեզվաբանական վերլուծությամբ մշակվել են նրա լեզվական կարողությունների ձևավորմանը նպաստող մանկավարժական մոտեցումներ՝ խոսքի արտահայտման դրդապատճառների, հետաքրքրասիրությունների, երեխաների կողմից լեզվանյութի ներքին վերահսկման և ազատ դրսևորման ապահովմամբ,
- նախադպրոցականի խոսքի լեզվաբանական տեսանկյունով վերլուծության հիման վրա առաջադրված մանկավարժական մոտեցումները դիտարկվում են որպես նախադպրոցական կրթական ծրագրի մշակման հիմք:

Հետազոտության տեսական նշանակությունը: Նախադպրոցականի լեզվական կարողությունների ձևավորման մանկավարժական մոտեցումները կհարստացնեն նախադպրոցական կրթական ծրագրի մշակման տեսական հիմքերը:

Հետազոտության գործնական նշանակությունը: Նախադպրոցականի լեզվական կարողությունների ձևավորման մեր մշակած մանկավարժական և մեթոդական մոտեցումները կարող են հաջողությամբ կիրառվել նախադպրոցական հաստատությունների ուսումնադաստիարակչական գործընթացում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներն են.

- նախադպրոցական կրթության բովանդակությունը սահմանող կրթական չափորոշիչներն ու ծրագրերը հարստացվում են նախադպրոցականի խոսքի վերահսկման և ազատ արտահայտման հնարավորությունների դիտարկմամբ,
- նախադպրոցական կրթական ծրագրերի մշակման հիմքը երեխայի խոսքի լեզվաբանական վերլուծությունն է, որն ապահովում է խոսքի ինքնակազմակերպումը, ազատ ինքնարտահայտումը,
- նախադպրոցականի կողմից լեզվանյութի ներքին վերահսկմանն ու ազատ արտահայտմանն ուղղված մանկավարժական մոտեցումները ենթադրում են երեխայի խոսքային ակտիվությունն ապահովող գործունեության տարբեր տեսակների, հաղորդակցական, խոսքային տարբեր իրավիճակների կազմակերպում:

Հետազոտության համար փորձարարական հենք են հանդիսացել Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի թիվ 1 («Սոխակ») պետական և Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի «Հրաշք մանկիկ» մասնավոր մանկապարտեզները: Ուսումնասիրվել է 130 նախադպրոցական: Ուսումնասիրությունների արդյունքները համակարգված են: Փորձարարական հետազոտությունն իրականացվել է երեք փուլով՝ 2006 – 2011 թթ. ընթացքում:

Առաջին փուլում (2006 – 2007 թթ.) հիմնախնդրի վերաբերյալ գիտական աղբյուրների վերլուծության հիման վրա ճշգրտվել են հետազոտության մեթոդաբանական հիմունքները, խնդիրները, նպատակը, սահմանվել են հետազոտության օբյեկտն ու առարկան, ընտրվել է հետազոտության բազան:

Երկրորդ փուլում (2007 – 2008 թթ.) որոշակիացվել են փորձարարական աշխատանքի կազմակերպման ձևերը, մշակվել են նախադպրոցականի լեզվական կարողությունների զարգացմանը միտված մանկավարժական մոտեցումներ, կազմվել են համապատասխան արձանագրություններ:

Երրորդ փուլում (2008 – 2011 թթ.) կազմակերպվել և իրականացվել են փորձարարական հետազոտության ձևավորող փուլով նախատեսված աշխատանքները, ստուգվել և հիմնավորվել է իրականացված աշխատանքի արդյունավետությունը, ստուգիչ փուլում ընդհանրացվել և համակարգվել են փորձարարական հետազոտության արդյունքները, կատարվել են եզրակացություններ:

Հետազոտության արդյունքների հիմնավորվածությունն ու հավաստիությունն ապահովվել են գիտամանկավարժական հետազոտությունների մեթոդաբանության ընտրությամբ, նախադպրոցական կրթության ժամանակակից մոտեցումներով, փորձարարության արդյունքների վիճակագրական վերլուծությամբ:

Հետազոտության փորձաքննությունը: Հետազոտության արդյունքները քննարկվել են ՀՊՄՀ նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստերում, ինչպես նաև տեսական սեմինարներում, հանրապետական և միջազգային գիտաժողովներում: Հետազոտության նյութերը ներկայացված են հոդվածներում և մենագրությունում:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, առաջարկություններից, 123 անուն գրականության ցանկից: Աշխատանքը համակարգչային շարվածքով 146 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հիմնախնդրի մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակը, վարկածը, օբյեկտը, առարկան, հետազոտական խնդիրները, տեսական և մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների հիմնավորվածությունն ու հավաստիությունը, փորձաքննությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին՝ **«Նախադպրոցական կրթական ծրագրերի բովանդակային վերլուծությունը»** խորագրով գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ **«Նախադպրոցական կրթության բովանդակության չափորոշիչները»** ենթագլխում քննարկված են կրթության բովանդակության էությունը, կառուցվածքային տարրերը, մակարդակները, կրթության բովանդակության ընտրության սկզբունքները, կրթության բովանդակության վերաբերյալ տեսական մոտեցումները, ինչպես նաև ներկայացված են նախադպրոցական կրթական չափորոշիչների մշակման տեսական հիմքերը, էությունը, խնդիրները, գործառույթները, նախադպրոցական կրթության բովանդակությունը սահմանող պետական չափորոշիչներով նախատեսված ոլորտները՝ շեշտադրելով նախադպրոցականի խոսքի և հաղորդակցման ոլորտը, նկատի ունենալով, որ եթե չափորոշչով կարող է որոշակիորեն սահմանափակվել կրթության բովանդակությունը, ապա, ելնելով երեխաների հետաքրքրություններից, այստեղ սահմանները պետք է լինեն չափազանց ազատ: Ուստի, նախադպրոցական կրթության բովանդակությունը սահմանող չափորոշիչներում պիտի շեշտադրվի երեխայի ինքնարտահայտումը, սեփական խոսքը վերահսկելու նրա հնարավորությունները՝ հստակեցնելով նախադպրոցական կրթության բովանդակությունն ու ծրագրային պահանջները:

Երկրորդ՝ «**Հայեցակարգային մոտեցումները նախադպրոցական կրթական ծրագրերում**» ենթագլխում քննարկված են նախադպրոցական կրթական հայեցակարգերը, որոնց հիման վրա մշակվել են նախադպրոցական կրթական ծրագրեր: Հայեցակարգային մոտեցումներում (ընդհանուր տեսական, պարադիգմատիկական, կոնցեպտուալ) կարևորվում են երեխայի կողմից կրթության բովանդակության ստեղծագործական յուրացումը, զարգացման տարիքային, անհատական առանձնահատկությունները, ուսումնադաստիարակչական գործընթացում երեխայակենտրոն մոտեցումը: Այսօր թեև ՀՀ նախադպրոցական կրթական համակարգն առաջնորդվում է անհատակողմնորոշիչ, մշակութաբանական մոտեցումների ինտեգրված մոդելով, այդուհանդերձ, չեն շեշտադրվում առաջնահերթ համարվող այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են, օրինակ, երեխայի ներուժի, նրա ներքին հնարավորությունների բացահայտումն ու դրանց հետագա զարգացումը:

Երրորդ՝ **«Նախադպրոցական կրթական ծրագրերի վերլուծությունը»** ենթագլխում վերլուծված են նախադպրոցական կրթական ծրագրի մշակման սկզբունքները, ծրագրերի գործառույթները, կառուցվածքը: Քննարկված են տարբեր ժամանակաշրջանների ծրագրերում առկա խոսքի զարգացման գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները, ինչպես նաև խնդրի վերաբերյալ արտասահմանյան մոտեցումները: Քննարկված են ՀՀ պետական մանկապարտեզներում գործող նախադպրոցական տարիքի

երեխաների կրթական համալիր ծրագրերը, կառուցվածքը՝ առանձնացնելով խոսքի զարգացման գործընթացին ներկայացվող ծրագրային պահանջները, որոնք առավելապես կրում են ուսուցանող քան զարգացնող բնույթ:

Ատենախոսության երկրորդ՝ **«Նախադպրոցականի խոսքի զարգացման առանձնահատկությունները»** խորագրով գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին՝ **«Երեխայի խոսքի զարգացման գիտատեսական մոտեցումները»** ենթագլխում վերլուծված են երեխայի խոսքի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա մանկավարժահոգեբանական, լեզվաբանական, ֆիզիոլոգիական մոտեցումները: Այսպես, մանկավարժական մոտեցումներում լեզվի յուրացման գործում կարևորվում են երեխայի միջավայրը, գործունեության տեսակները, տարեկիցների և մեծահասակների դերը (Յ. Ամ. Կոմենսկի, Խ Աբովյան, Ղ. Աղայան), դաստիարակի խոսքի մշակույթը (Ի. Հ. Պեստալոցցի, Ե. Ի. Տիխեևա, Մ. Մամուրյան, Է. Ա. Ալեքսանդրյան, Ջ. Հ. Գյուլամիրյան, Ս. Ա. Մարության), երեխայի ակտիվությունը, խոսքի իմաստի ընկալումը (Օ. Ս. Ուշակովա, Ե. Մ. Ստրունինա, Ս. Մանդինյան, Ա. Բահաթրյան, Հ. Հինդլյան): Հոգեբանների մոտեցումներում քննարկվում են երեխայի խոսքի անհատական, խմբային տեսակները (Ժ. Վ. Պիաժե), խոսքի սոցիալական բնույթը (Լ. Ս. Վիգոտսկի), հաղորդակցման դերը լեզվի յուրացման գործում (Մ. Ի. Լիսինա): Լեզվաբանների մոտեցումներում քննարկվում են լեզվական միավորների յուրացման առանձնահատկությունները երեխաներին բնորոշ համընդհանուր քերականության միջոցով (Ա. Ն. Հոմսկի), երեխայի կողմից լեզվական երևույթների տարրական գիտակցման խնդիրը (Ֆ. Ա. Սոխին), իսկ խոսքի ֆիզիոլոգիական մոտեցումներում խոսքի ներքին մեխանիզմների միջոցով բացահայտվում է լեզվի միավորների ընտրությունը (Բ. Ի. Ժինկին):

Երկրորդ՝ **«Նախադպրոցականի խոսքի լեզվաբանական կողմի վերլուծությունը»** ենթագլխում նկարագրված են երեխայի կողմից լեզվի միավորների յուրացման առանձնահատկություններն օնտոգենեզում՝ առանձին-առանձին քննարկելով խոսքի բաղադրիչները՝ հնչյունային (լեզվի հնչյունների ընկալումն ու դրանց մաքուր արտաբերումը) բառային (երբ կարևորվում է ոչ միայն բառերի քանակական ավելացումը, այլև որակական կողմը՝ բառիմաստի ընկալումը) քերականական (երբ երեխան դրսևորում է քերականական կանոններն ընդհանրացնելու միտում): Խոսքի լեզվաբանական կողմի վերլուծությամբ բացահայտված է, որ լեզվի յուրացումը երեխայի կողմից մեխանիկական բնույթ չի կրում, քանի որ նա սեփական խոսքը կառուցում է լեզվի կանոններին համապատասխան՝ լեզվական միավորները ենթարկելով որոշակի փոփոխության, ինչն էլ հանգեցնում է լեզվական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, որի արդյունքում

երեխան ինքնակազմակերպման է ենթարկում սեփական խոսքը և այն անկաշկանդ արտահայտում:

Երրորդ՝ **«Նախադպրոցականի բանավոր խոսքի զարգացումը»** ենթագլխում քննարկված են նախադպրոցականի խոսքային գործունեության կառույցը, խոսքարտահայտման փուլերը (խոսքային մտադրության, ասույթի իմաստի հստակեցման, ներքին ծրագրավորման, արտահայտության քերականական և բառային ձևավորման, ասույթի արտաբերման)՝ խոսքի զարգացման գործում կարևորելով խոսքի ներքին կազմակերպման, համապատասխան լեզվական միավորներով երեխայի կողմից այն դրսևորելու կարողությունը: Լեզվական կարողությունների զարգացումը դիտարկված է երեխայի իրականացրած խոսքային գործունեության, հաղորդակցման ձևերի միասնության տեսանկյունից, որոնք նպաստում են լեզվական միավորների արդյունավետ յուրացմանը: Այսպիսով, նախադպրոցականի կողմից լեզվի յուրացման և կիրառման ձևերի շարքում առանձնացվում են լեզվական-հաղորդակցական իրազեկությունը և խոսքային գործունեությունը, որի տարբեր ձևերում (ընկալում, վերարտադրում, փոխգործունեություն) դրսևորվում է նրա լեզվական-հաղորդակցական իրազեկությունը[1]: Հետևապես, մի կողմից, խոսքային գործունեությունը, որը միջնորդավորված է լեզվական համակարգով ու պայմանավորված իրավիճակով, նպաստում է հաղորդակցման նոր ձևերի առաջացմանը, մյուս կողմից, վերջիններս են նպաստում խոսքային գործունեության կազմակերպմանը, խոսքի ներքին պլանավորմանը, երեխայի կողմից լեզվանյութի ներքին վերահսկմանը և ազատ դրսևորմանը:

Երկրորդ գլխի չորրորդ՝ **«Ավագ նախադպրոցականի խոսքի զարգացման առանձնահատկությունների և ծրագրային պահանջների համեմատական վերլուծությունը»** ենթագլուխում ներկայացված են ավագ նախադպրոցականի խոսքի զարգացման յուրահատկությունները, առանձին-առանձին վերլուծված են խոսքի զարգացման խնդիրները:

Հաստատված է, որ ավագ նախադպրոցական տարիքում երեխան ընդունակ է գնահատել սեփական գործողությունները, խոսքը: Սա հաղորդակցական, խոսքարտահայտումը խթանող իրավիճակների կազմակերպման արդյունք է: Այնինչ, պետական մանկապարտեզներում գործող ավագ նախադպրոցականի կրթական համալիր

[1]

[1] Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում// Կրթության հարցերով պատասխանատու հանձնաժողով, Լեզվի քաղաքականության վարչություն, Ստրասբուրգ, Ե.:-2005, էջ 15-16

ծրագրի խոսքի զարգացման ոլորտի վերլուծությամբ բացահայտվել են բացթողումները, որոնք խոչընդոտում են երեխայի խոսքի ներքին կազմավորմանը, ազատ արտահայտմանը, խոսքային գործունեության ընթացքում դրսևորվող լեզվական-հաղորդակցական կարողությունների ձևավորմանը: Ծրագրերը կրելով առարկայական բնույթ՝ որոշակի պահանջներ են ներկայացնում խոսքի զարգացման խնդիրներին՝ կաշկանդելով երեխայի լեզվական կարողությունների ձևավորումը, լեզու յուրացնելու ներքին հնարավորությունների ազատ դրսևորումը:

Ատենախոսության երրորդ՝ **«Ավագ նախադպրոցականի լեզվական կարողությունների զարգացման մանկավարժական պայմանները»** խորագրի առաջին՝ **«Փորձարարական հետազոտության նպատակը, խնդիրները»** ենթագլխում հստակեցված են փորձարարական հետազոտության նպատակը, խնդիրները, աշխատանքի կազմակերպման ուղիները: Փորձարարությունն իրականացվել է ավագ նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում (5-6 տարեկան)՝ հաշվի առնելով, որ տարիքային այս փուլում երեխաները պետք է լիարժեք կերպով տիրապետեն մայրենի լեզվին՝ հաջորդ՝ ուսումնական գործունեության փուլում հաջողությամբ ներգրավվելու և դրսևորվելու համար: Ուսումնասիրվել է 130 նախադպրոցական: Փորձարարական հետազոտությունն իրականացրել ենք արձանագրող, ձևավորող և ստուգիչ փուլերով:

Փորձարարական հետազոտության նպատակն էր բացահայտել ավագ նախադպրոցականի լեզվական կարողությունների ձևավորմանը միտված մեր կողմից առաջադրված մանկավարժամեթոդական մոտեցումների արդյունավետությունը:

Փորձարարական հետազոտության խնդիրներն էին.

- դիտարկել ավագ նախադպրոցականների խոսքի լեզվաբանական կողմը՝ արձանագրելով երեխաների խոսքային դժվարությունները,
- հստակեցնել և փորձարարական խմբի երեխաների հետ կազմակերպել աշխատանքներ՝ առաջադրված մանկավարժամեթոդական մոտեցումների ապահովմամբ,
- վերլուծել համապատասխան հայտորոշիչ մեթոդիկաների միջոցով ստուգողական և փորձարարական խմբերի երեխաների լեզվական կարողությունների զարգացածության մակարդակները:

Արձանագրող փորձարարական հետազոտության ընթացքում աշխատանքը կազմակերպել ենք հետևյալ ուղղություններով.

- բացահայտել ենք ավագ խմբի կրթական համալիր ծրագրի խոսքի զարգացման ոլորտի արդյունավետության աստիճանը, գործնական նշանակությունը երեխաների հետ կազմակերպվող աշխատանքներում,
- ուսումնասիրել ենք ընտրված մանկապարտեզներում խոսքի զարգացման գործընթացի կազմակերպման մեթոդները, միջոցները և ձևերը,

- արձանագրել ենք և դասակարգել երեխաների խոսքային դժվարությունները,
- հստակեցրել ենք ավագ նախադպրոցականների լեզվական կարողությունների զարգացածության մակարդակները բացահայտող հայտորոշիչ մեթոդիկաները,
- առանձնացրել ենք փորձարարական և ստուգողական խմբերը,
- բացահայտել ենք փորձարարական խմբի երեխաների լեզվական կարողությունների զարգացածության նախնական մակարդակը:

Արձանագրել ենք երեխաների խոսքային հետևյալ դժվարությունները. այն, ինչ երեխաները սովորում էին պարապմունքների ընթացքում, չէին կիրառում գործունեության մյուս տեսակների ժամանակ, դժվարանում էին իրադարձությունները, երևույթները կապակցված խոսքով պատմելու ժամանակ, բացակայում էր մտքի տրամաբանական հաջորդականությունը, դժվարությամբ էին ընտրում հոմանիշներ, հականիշներ, արտաբերում առանձին հնչյուններ (ս-շ, ր-ռ, յա, յու), դժվարանում էին բառի մեջ հնչյունն առանձնացնելիս, գոյականի եզակի թիվը հոգնակի դարձնելիս, նախադասություններում բառերը կիրառում էին սխալ հոլովաձևով, ճիշտ չէին կիրառում բայի ժամանակաձևերը: Փորձարարության այս փուլում հայտորոշիչ մեթոդիկաների միջոցով բացահայտել ենք փորձարարական խմբի երեխաների խոսքի զարգացածության նախնական մակարդակը: Նախքան արդյունքների ներկայացնելը՝ անդրադառնանք նշված մեթոդիկաների նկարագրությանը. «Անվանիր բառեր» (Ռ. Ս. Նեմով) հայտորոշիչ մեթոդիկան միտված է բացահայտելու բառապաշարի զարգացածությունը, որի ընթացքում երեխաները 160 վայրկյանում անվանում են ութ ոլորտին առնչվող բառեր: «Պատմում» (Վ. Ն. Մարկովա, Ե. Ա. Ստավցևա, Մ. Ն. Եդյակովա) հայտորոշիչ մեթոդիկան ուղղված է նախադասությունները քերականորեն ճիշտ կազմելու, ընթերցվածն ընկալելու և վերարտադրելու երեխաների կարողությունների գնահատմանը: «Անվանիր մեկ բառով» (Վ. Ն. Մարկովա, Ե. Ա. Ստավցևա, Մ. Ն. Եդյակովա) հայտորոշիչ մեթոդիկան միտված է արտահայտությունները մեկ բառով նշելու, հոմանիշ, հականիշ բառեր ընտրելու երեխաների կարողությունների բացահայտմանը: Օ. Ս. Ուշակովայի կողմից առաջադրված հայտորոշիչ մեթոդիկան ամբողջությամբ բացահայտում է երեխայի խոսքի լեզվաբանական զարգացածության աստիճանը՝ հնչյունային, բառային, քերականական և կապակցված խոսքի կողմերով: Յուրաքանչյուր հայտորոշիչ մեթոդիկայի ժամանակ երեխաների պատասխանները գնահատվել են ըստ տրված չափանիշների:

Հայտորոշիչ մեթոդիկաներից ստացված արդյունքները ներկայացված են աղյուսակի տեսքով (աղյուսակ 1).

Աղյուսակ 1

Փորձարարական խմբի երեխաների լեզվական կարողությունների զարգացածության նախնական մակարդակը.

Մեթոդիկաներ	Փորձարարական խումբ n = 30					
	ցածր		միջին		բարձր	
	n	%	n	%	n	%
Անվանիր բառեր	16	53	9	30	5	17
Պատմում	14	47	11	36	5	17
Անվանիր մեկ բառով	14	47	10	33	6	20
Մեթոդական թեստ՝ըստ Օ. Ս. Ուշակովայի	18	60	9	30	3	10

Փորձարարական հետազոտության երկրորդ՝ **«Ավագ նախադպրոցականի լեզվական կարողությունների զարգացմանը միտված մանկավարժական աշխատանքի կազմակերպումը»** ենթագլխում ներկայացված է փորձարարության ձևավորող փուլը, որի ընթացքում իրականացրել ենք փորձարարական խմբի երեխաների լեզվական կարողությունների ձևավորմանը միտված աշխատանքներ՝ մանկավարժամեթոդական հետևյալ մոտեցումների ապահովմամբ.

- ✓ խոսքի արտահայտման դրդապատճառների, ճանաչողական հետաքրքրությունների ապահովումը, որը նպաստում էր երեխաների խոսքային գործունեության ակտիվությանը,
- ✓ տվյալ պահին երեխաների դրսևորած խոսքային ակտիվության հիման վրա խոսքային գործունեության ծավալում՝ նպաստելով ազատ խոսքարտահայտմանը,
- ✓ երեխաների կողմից լեզվանյութի վերահսկման և ազատ դրսևորման ապահովումը (հաղորդակցական, խոսքային տարբեր իրավիճակների ստեղծմամբ և քննարկմամբ):

Աշխատանքներն իրականացրել ենք օրվա տարբեր պահերին: Փորձարարական խմբի երեխաների հետ աշխատանքները կազմակերպել ենք խոսքի բոլոր բաղադրիչների զարգացման ուղղությամբ. խոսքի հնչյունային կողմի ձևավորման, բառապաշարի հարստացման և ակտիվացման, քերականական կառույցի ձևավորման, կապակցված խոսքի զարգացման,

ինչպես նաև ծանոթացում գեղարվեստական գրականությանը և տառաճանաչությանը միտված աշխատանքների կազմակերպում:

Փորձարարական հետազոտության երրորդ՝ **«Փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծությունը»** ենթագլխում ներկայացված է ստուգիչ փուլը՝ ստուգողական և փորձարարական խմբերից ձեռք բերված արդյունքների համեմատական վերլուծությամբ: Արդյունքները ներկայացված են թիվ 2 աղյուսակում:

Աղյուսակ 2

Փորձարարական և ստուգողական խմբերի երեխաների լեզվական կարողությունների զարգացածության համեմատական մակարդակը.

մեթոդիկաներ	**Փորձարարական խումբ n=30**						**Ստուգողական խումբ n=30**					
	ցածր		միջին		բարձր		ցածր		միջին		բարձր	
	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
Անվանիր բառեր	3	10	9	30	18	60	14	46	11	37	5	17
Պատմում	3	10	10	33	17	57	16	53	11	37	3	10
Անվանիր մեկ բառով	2	7	10	33	18	60	15	50	10	33	5	17
Մեթոդական թեստ՝ըստ Օ. Ս.Ուշակովայի	5	17	10	33	15	50	18	60	9	30	3	10

Փորձարարական աշխատանքի արդյունքները ներկայացված են թիվ 1 տրամագրում՝ ըստ փորձարարության փուլերի.

Տրամագիր 1

Աշխատանքի արդյունքներն ըստ փորձարարության փուլերի.



Հայտորոշիչ մեթոդիկաներից ստացված արդյունքների վերլուծությունը փաստում է նախադպրոցականի լեզվական կարողությունների ձևավորմանը միտված մեր կողմից առաջադրված և կիրառված մանկավարժամեթոդական մոտեցումների արդյունավետությունը:

Փորձարարական աշխատանքների, ուսումնասիրությունների, նրանց արդյունքների վերլուծությունների հիման վրա հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. թեև նախադպրոցական կրթական ծրագրերի մշակման տեսական և գործնական հիմքերի վերլուծությամբ բացահայտվում են նախադպրոցական տարիքի երեխաների հետ աշխատանքի սկզբունքները, միջոցները, կազմակերպման ձևերը, որոնք որոշակիացվում են նախադպրոցական կրթության բովանդակությամբ, կրթական չափորոշիչներով, ժամանակակից հայեցակարգային մոտեցումներով, այդուհանդերձ, ավագ նախադպրոցականի լեզվական կարողությունների ձևավորման հնարավորությունները չեն քննարկվում նախադպրոցականի սեփական խոսքի վերահսկման, ինքնակազմակերպման, ազատ արտահայտման կարողությունների ձևավորման միջոցների ընտրության տեսանկյունից.

2. նախադպրոցական կրթական ծրագրերի խոսքի զարգացման ոլորտի պահանջների վերլուծությամբ բացահայտվում է դրանց առարկայա-ուսուցողական, սակայն ոչ զարգացնող բնույթը, երբ չեն դիտարկվում լեզու յուրացնելու երեխաների ներքին հնարավորությունները, լեզվական միավորներում նրանց կողմնորոշվելու առանձնահատկությունները: Բացի այդ, դրանցում չեն մեկնաբանվում երեխաների հետ տարվող աշխատանքի ձևերը, ուղիները, ինչպես նաև լեզվական կարողությունների գնահատման բաղադրիչները՝ «իմանալ, կարողանալ, տիրապետել» սանդղակով: Առավելապես ծրագրերը կրում են նկարագրական բնույթ, որն առավել կաշկանդում է քան նպաստում երեխայի խոսքի ազատ ինքնարտահայտմանն ու ինքնադրսևորմանը.

3. երեխայի խոսքի լեզվաբանական վերլուծությունը միջգիտական կապերի տեսանկյունից բացահայտում է նրա կողմից խոսքի ամբողջական ընկալումը՝ ներքին կազմակերպման ու դրսևորման առանձնահատկություններով. նկարագրականից զատ, երեխայի խոսքի զարգացումը դիտարկվում է որոշակի պայմաններում, որն ապահովում է լեզվական միավորների հանդեպ երեխայի ակտիվությունը և դրանց արդյունավետ յուրացումը.

4. խոսքի լեզվաբանական վերլուծությամբ բացահայտվում են լեզվական միավորների յուրացման և խոսքում դրանց կիրառման երեխայի հնարավորությունները, որոնք դրսևորվում են հնչյունային, բառային, քերականական ձևերում նրա կողմնորոշմամբ և լեզվական միավորների տարրական գիտակցմամբ: Լեզվական միավորների յուրացումն ու կիրառումը

պայմանավորված են երեխայի խոսքային ակտիվությամբ, լեզվանյութի վերահսկման, խոսքի ազատ արտահայտման կարողություններով.

5. կարևորվում է այնպիսի մանկավարժամեթոդական մոտեցումների, միջոցների, ձևերի գործադրումը, որոնք առավել նպաստում են երեխաների խոսքի ազատ արտահայտմանը, ինքնադրսևորմանը, խոսքի վերահսկմանը, ինչպես դիմացինի, այնպես էլ սեփական խոսքի գնահատմանը.

6.ավագ նախադպրոցականների խոսքի ինքնակազմակերպման, ազատ, ստեղծագործական ինքնարտահայտման կարողությունների ձևավորմանը միտված փորձարարական աշխատանքների արդյունքում բացահայտվել է, որ նրանց մոտ որոշակի աճ է արձանագրվում համապատասխան մանկավարժամեթոդական մոտեցումների ապահովման դեպքում՝ ազատ խոսքարտահայտումը, խոսքային ակտիվությունն ապահովող հաղորդակցական, խոսքային իրավիճակների ստեղծմամբ, որով էլ հաստատվում է փորձարարության արդյունավետությունը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախադպրոցականի խոսքի լեզվաբանական վերլուծությամբ բացահայտված և փորձարարական հետազոտությամբ հիմնավորված մեր կողմից առաջադրվող մոտեցումները կիրառելի են նախադպրոցական տարիքի բոլոր խմբերի համար մշակվող ծրագրերում: Ըստ այդմ, կարևոր է՝

- ✓ կրթական ծրագիրը դիտարկել ոչ թե դաստիարակի առջև դրված նպատակների իրականացման, այլ երեխաների ինքնաիրացման, ինքնակազմակերպման ու ինքնազարգացման գործիք,
- ✓ նախադպրոցական կրթական ծրագրի բովանդակության հիմքում առաջնահերթությունը պետք է տալ ոչ միայն մեծերի կողմից տրվող ցուցումներին, այլև երեխաների ինքնաիրացումը խրախուսող միջոցներին,
- ✓ դիտարկել երեխայի կողմից լեզվի կանոնների յուրացման գործընթացի առանձնահատկությունները, ինչը հնարավորություն կտա երեխային ոչ միայն ընդօրինակել մեծահասակին, այլև կատարել լեզվական երևույթների ընդհանրացումներ՝ ապահովելով լեզվանյութի ներքին վերահսկումն ու արտահայտումը,
- ✓ խոսքարտահայտման դրդապատճառների դիտարկմամբ նախադպրոցականների հետաքրքրությունների առաջացումը՝ ապահովելով խոսքային ակտիվությունը, լեզվական կարողությունների զարգացումը,
- ✓ ծրագրի մշակման հիմքում դիտարկել լեզվի հաղորդակցական-գործնական կիրառումը, երբ խոսքը հանդես է գալիս որպես լեզվի կիրառմամբ գործունեություն՝ հենված գործունեության տեսակների, հաղորդակցման ձևերի բազմազանության վրա,

✓ խոսքի զարգացման գործընթացի կազմակերպման համակարգային մոտեցում, որն օգնում է երեխային յուրացնել լեզուն որպես ամբողջական համակարգ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1.Ամիրաղյան Մ. Գ., Խոսքային դրսևորումների զարգացումը նախադպրոցական տարիքում: Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, №5 – 6, Երևան 2007թ., էջ 72-77:

2.Ամիրաղյան Մ. Գ., Երեխայի կողմից լեզվական միավորների յուրացումը և կիրառումը խոսքի մեջ, Նախաշավիղ, գիտամեթոդական հանդես, № 6, Երևան, 2008թ., էջ 32-38:

3.Ամիրաղյան Մ. Գ., Պրոբլեմային իրավիճակների դերը երեխայի խոսքի զարգացման գործում: Նախադպրոցական կրթություն /Մանկավարժական միտք/ № 2, Զանգակ – 97, Երևան, 2009թ., էջ 44-48:

4.Ամիրաղյան Մ. Գ., Լեզվական համակարգի կիրառումը նախադպրոցահասակ երեխայի խոսքում: Ժողովածու՝ նվիրված Խ. Աբովյանի ծննդյան 200 ամյակին/ 1 – ին Պրակ/, Մանկավարժ, Երևան, 2010թ., էջ 71-73:

5.Ամիրաղյան Մ. Գ., Ավագ նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացման արդի մոտեցումներ: Մխիթար Գոշ գիտամեթոդական հանդես, № 10 – 12 (39), ՍԻՄ տպագրատուն, Վանաձոր, 2013թ., էջ 70-75:

6.Амирагян М. Г., Общение как средство усвоения и применения языковых явлений в старшем дошкольном возрасте. Дошкольное образование: история и современность, сборник научных статей, БГПУ, Минск, 2015 /со автор С. А. Марутян/, с. 152-154.

7.Amiraghyan M. G., The Methodical Principles of Child's Speech Development Curriculum. Wisdom, №2, ASPU, Yerevan, 2016, РИНЦ, p. 168-173.

8.Amiraghyan M. G., The Perception and Usage of Language Units in Preschooler's Speech. Успехи современной науки, международный научно-исследовательский журнал, №11, том 2, г. Белгород ВАК, 2016, p. 158-160.

9.Ամիրաղյան Մ. Գ.,Խոսքի յուրացման, առաջատար գործունեության և հաղորդակցման արտահայտչամիջոցների փոխադարձ կապերը նախադպրոցական տարիքում: Մխիթար Գոշ, գիտական հոդվածներ, 2(45), ՍԻՄ տպագրատուն, Վանաձոր, 2016թ., էջ 122-125:

10.Amiraghyan M. G., The formation of communicative competences at senior preschool age. European Applied Sciences /Europaische Fachhochschule/, ORT publishing, Germany, 2016, p. 31-33.

11.Ամիրաղյան Մ. Գ., Ավագ նախադպրոցականի խոսքի զարգացման ծրագրի մշակման մեթոդաբանական հիմքերը: Հանրապետական

գիտաժողով՝ նվիրված ՀՀանկախության 25-ամյակին /Մայիլյան Լ. Տ. համահեղինակությամբ/, Էլդորադո հրատարակչություն, Գյումրի, 2017, էջ 7-11:

12.Amiraghyan M. G., The analysis of the contents of senior preschooler's speech development curriculums. Գիտական տեղեկագիր, № 2-3 (31-32), Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, 2017թ., էջ 20-25:

13.Amiraghyan M. G., The description of scientific approaches to preschooler's speech development. Грамота, Вопросы теории и практики, научно-теоретический и прикладной журнал, №3 (7) г. Тамбов, 2017, с. 8-10.

14.Amiraghyan M. G., The linguistic analysis of preschooler's speech as a basis of designing educational curriculum. Monograph, Lambert, Academic publishing, 2017, 40p.

15.Amiraghyan M. G., The Prospective of the Investment of Contemporary Paradigm of Preschool Education in Future Armenia. Proceedings of the IV International Forum on Teacher Educatio, 22-24 May 2018, Kazan (Volga Region) Federal University, Russian Federation //co-authors V. S. Karapetyan, A. M. Dallakyan, M. Ispiryan, M. R. Zheltukhina, SCOPUS, Salva, Supplement 2, 2018, p. 380-389.

16.Amiraghyan M. G., The linguistic analysis of preschooler's speech as a basis of designing educational curriculum. Язык и актуальные проблемы образования, Научные труды IV Международной научно-практической конференции. 18 января 2019, г. Москва, МГОУ. с. 255-259.

17. Amiraghyan M. G., The analysis of conceptual approaches to the content of preschool education. Կրթության արդի հիմնախնդիրները. Միջազգային գիտաժողով. Շիրակի պետական համալսարան. 2019թ., էջ 14-21:

МАРИАННА ГИГОЛОВНА АМИРАГЯН

ЛИНГВИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ РЕЧИ ДОШКОЛЬНИКА КАК ОСНОВА РАЗРАБОТКИ ОБРАЗОВАТЕЛЬНОЙ ПРОГРАММЫ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 - "Теория и история педагогики".

Защита диссертации состоится 18-го декабря 2019г. в 12^{00} на заседании специализированного совета 020 "Педагогика" ВАК при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010, г. Ереван, ул. Тигран Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования: На современном этапе образовательных реформ пересмотр содержания образования, стандартов, образовательных программ дошкольного образования направлен на стимулирование самовыражения, самореализации и самоорганизации ребенка. Надежной основой в осуществлении указанных процессов является своевременное формирование и развитие языковых умений у дошкольников, способствующих продуктивности педагогического взаимодействия и обеспечивающих более эффективное усвоение программного содержания.

Следует отметить, что процесс разработки образовательных программ требует разрешения определенных противоречий, которые проявляются часто в несоответствии принципов организации действующих образовательных программ требованиям современной педагогической науки. В данном контексте не являются исключением программы дошкольного образования. Имея предметную направленность и не объединяясь вокруг одной общей идеи, они вызывают серьезные трудности в процессе организации практической работы.

Учитывая тот факт, что эффективность педагогических работ, проводимых с дошкольниками, обусловлена их языковыми навыками, возникает необходимость в ряду познавательных умений дошкольников выделить языковые умения, которые, отображая лингвистическую сторону развития речи, характеризуются самоорганизацией речи и свободным ее проявлением, способностью легко выражаться, активно и творчески самовыражаться. Лингвистический анализ речи дошкольника с разработкой соответствующих педагогических подходов формирования языковых умений рассматривается нами как основа для создания дошкольной образовательной программы.

Цель исследования- посредством лингвистического анализа речи дошкольника выявить особенности усвоения языка и разработать

педагогические подходы, как основы дошкольных образовательных программ, направленные на самоорганизацию и свободное выражение речи.

Задачи исследования:

1. изучить теоретические и практические основы содержания дошкольного образования, стандартов и образовательных программ,
2. исследовать программные требования к развитию речи дошкольника,
3. проанализировать лингвистические особенности речи ребенка с позиций междисциплинарных научных связей,
4. выявить возможности ребенка к усвоению языковых единиц и применению их в речи,
5. раскрыть, разработать, внедрить педагогические и методические подходы, способы и формы развития языковых умений дошкольника,
6. экспериментально проверить эффективность педагогических подходов по формированию у старшего дошкольника языковых умений.

Научная новизна исследования.

- На основе лингвистического анализа речи выявлено, что сформированные языковые умения являются результатом самоорганизации и свободного выражения речи дошкольника.
- Разработаны педагогические подходы формирования языковых умений у дошкольников, обеспечивающие интерес и мотивацию к речевой деятельности, свободное проявление и внутреннюю регуляцию языкового материала.
- Педагогические подходы, разработанные на основе лингвистического анализа речи, рассматриваются в качестве основы дошкольной образовательной программы.

Теоретическое значение исследования. Педагогические подходы формирования языковых умений обогатят теоретические основы построения дошкольной образовательной программы.

Практическое значение исследования. Педагогические подходы формирования языковых способностей у старших дошкольников могут быть успешно применены в образовательно-воспитательном процессе дошкольных учреждений.

Структура и обьем работы.

Диссертация состоит из введения, трех глав, выводов, рекомендации, списка литературы. Обьем диссертации составляет 146 компьютерных страниц.

MARIANNA GIGOL AMIRAGHYAN

THE LINGUISTIC ANALYSIS OF PRESCHOOLER'S SPEECH AS A BASIS OF DESIGNING EDUCATIONAL CURRICULUM

Thesis for the degree of Candidate of Pedagogical Sciences, specialty 13.00.01 -"Theory and History of Pedagogy".

The defence of the thesis will be held on December 18 2019 at 12^{00} at the session of the Special Board 020 "Pedagogy" HAC (Higher Attestation Commission) to award scientific degrees at Kh. Abovyan Armenian State Pedagogical University.

Address: 0010, Tigran Mets ave. 17, Yerevan.

SUMMARY

The relevance of the research. At the present stage of educational reforms, the revision of the content of education, standards, educational curricula aims at stimulating child's self-expression, self-realization and self-organization. A reliable basis in the implementation of these processes is the formation and development of preschooler's linguistic abilities, contributing to the productivity of pedagogical interaction and providing more effective perception of curriculum content.

It should be noted that the process of designing educational curricula requires the solution of certain contradictions, which are often reflected in the inconsistency of the principles of educational curricula with the requirements of modern pedagogical science. In this context, preschool educational curricula are no exception. Having a subject focus and not being united around one common idea, they arouse serious difficulties in the process of organizing practical work with children.

Taking into account the fact that the effectiveness of pedagogical work with preschoolers is conditioned with their linguistic abilities, there is a need for distinguishing linguistic abilities among preschooler's cognitive skills, which are characterized by inner planning and creative expression. The linguistic analysis of preschooler's speech with the developing of appropriate pedagogical approaches to the formation of linguistic abilities, is considered as a basis for designing preschool educational curriculum.

The purpose of the research is to reveal the features of perceiving language by linguistic analyses of speech and develop pedagogical approaches, as the bases of educational curriculum, aimed at preschooler's speech self-organization and expression.

The objectives of the research:

1. to study the theoretical and practical bases of the content of preschool education, preschool educational curricula and standards,
2. to study the curriculum requirements for preschooler's speech development,
3. to analyze the linguistic aspect of child's speech from the perspective of inter-scientific relations,
4. to reveal child's abilities of perceiving linguistic units and their usage in speech,
5. to reveal, design and invest the pedagogical and methodical approaches, means and forms of forming preschooler's linguistic abilities,
6. to reveal the effectiveness of pedagogical approaches offered by us for the formation of senior preschooler's linguistic abilities.

The scientific novelty of the research.

- through the linguistic analysis of speech it has been revealed that the developed linguistic abilities are the result of preschooler's self-organization of speech and its free expression.
- The pedagogical approaches of forming preschooler's linguistic abilities have been developed through linguistic analysis of speech providing motivations, interests of expression and inner controlling of language material.
- The pedagogical approaches, offered through the linguistic analysis of speech are considered as the bases of designing preschool educational curriculum.

The theoretical relevance of the research. The pedagogical approaches of developing preschooler's linguistic abilities will enrich the theoretical bases for designing preschool educational curriculum.

The practical relevance of the research. The pedagogical approaches of forming senior preschooler's linguistic abilities can be successfully implemented in the educational process of preschool institutions.

The structure and the volume of the dissertation.

The dissertation consists of an introduction, three chapters, conclusions, suggestions, a list of reference. The volume of the dissertation is 146 computer pages.